ՀՏԴ : 929 : 281.6 Հովհաննես Տավուշեցի-Վանական + 783(479.25)
DOI: 10.54503/2579-2830-2022.2(8)-28

ՀՈԳԵՎՈՐ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՎԱՆԱԿԱՆ ՎԱՐԴԱՊԵՏԻ «ՀԱՐՑՄՈՒՆՔ ԵՎ ՊԱՏԱՍԽԱՆԻՔ» ԵՐԿՈՒՄ

ԱՆՆԱ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ*

Հղման համար. Արևշատյան, Աննա: «Հոգևոր երաժշտության խնդիրները Վանական վարդապետի «Հարցմունք և պատասխանիք» երկում»: *Արվեստագիտական հանդես,* N 2 (2022): 28-39. DOI: 10.54503/2579-2830-2022.2(8)-28

Միջնադարյան Հայաստանի վանքերին կից գործող վարդապետարաններում դասավանդվող բազմապիսի նյութը ամփոփվում էր միջնադարյան ուսուցողական գրականությանը բնորոշ հարց ու պատասխանի ձևով շարադրված դասագրքերում: Մեզ հասած առաջին նմանատիպ համառոտ հարցարանը Հովհաննես Տավուշեցու կամ Վանական վարդապետի (1181-1251) կազմած «Հարցմունք եւ պատասխանիք»-ն է: Այն լայնորեն գործածվել է Հայաստանի միջնադարյան համալսարաններում և առաջին հերթին իր իսկ հիմնադրած Խորանաշատի հռչակավոր վարդապետարանում: Ի թիվս այլ գիտությունների, Հովհաննես Վանականի դասագրքում տեղ են գտել երաժշտական արվեստին վերաբերող հարցեր և պատասխաններ, ինչը վկայում է այն մասին, որ Խորանաշատի դպրոցի ուսումնական ծրագրում հոգևոր երգարվեստի գործնական ուսուցմանը, եկեղեցական երաժշտության պատմության, տեսության և գեղագիտության հարցերին լուրջ ուշադրություն էր հատկացվում: Հովհաննես Վանականի «Հարցմունք եւ պատասխանիք» երկը XIII դարի հայ միջնադարյան վարդապետարան-համալսարաններում շրջանառվող հանրագիտարանային բնույթի կարևոր ձեռնարկներից էր: Այդ աշխատության օրինակով են ստեղծվել հետագայի նմանատիպ երկերը, որոնց թվում՝ Վարդան Արևելցու «Ժղլանքը» և Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ը:

Բանալի բառեր՝ Խորանաշատ, վարդապետարան, Վանական վարդապետ, «Հարցմունք եւ պատասխանիք», շարականագիտություն, Ութձայնի տեսություն, «ձայնից» մեկնություններ:

Ներածություն

Այս տարի նշվում է հայ միջնադարյան գրչության և կրթության կարևորագույն կենտրոններից մեկի՝ Խորանաշատի վանական համալիրի 800-ամյակը: Խորանաշատի անվանումը անբաժանելի է իր հիմնադրի՝ XIII դարի հայ մատենագրության ամենանշանակալի դեմքերից մեկի՝ Հովհաննես Տավուշեցու կամ Հովհաննես Վանական վարդապետի (1181-1251) անունից, ով հայտնի էր որպես աստվածաբան, մեկնիչ, պատմագիր, մանկավարժ և տոմարագետ: Հանրագիտակ մտավորական, ում գիտական հետաքրքրություններն ընդգրկել են գիտելիքների մի շարք բնագավառներ, ով եղել է Մխիթար Գոշի աշակերտը և օգնականը, ժառանգելով իր նշանավոր ուսուցչի հիմնած Նոր Գետիկի դպրոցի լավագույն ավանդույթները: 1222 թ. հիմնադրելով Խորանաշատի վանքը, նա ստեղծեց մեծ հռչակի արժանացած իր դպրոցը, պատրաստեց բազմաթիվ

* ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտի երաժշտության բաժնի առաջատար գիտաշխատող, ՀՀ արվեստի վաստակավոր գործիչ, արվեստագիտության դոկտոր, պրոֆեսոր, anna_arevshatyan@hotmail.com, հոդվածի ներկայացնելու օրը՝ 29.08.2022, գրախոսելու օրը՝ 01.12.2022, տպագրության ընդունելու օրը՝ 15.12.2022:

սաներ, որոնց թվում էին Կիրակոս Գանձակեցին, Վարդան Արևելցին, Գրիգոր Ակներցին և հետագայում հայտնի դարձած շատ ուրիշ եկեղեցական-քաղաքական և մշակութային գործիչներ [17]:

Հիմնական նյութի շարադրում

Հայտնի է, որ վանքերին կից գործող վարդապետարաններում դասավանդվող բազմապիսի նյութը (աստվածաբանությունն ու եռյակ և քառյակ գիտությունները) ամփոփվում էր միջնադարյան ուսուցողական գրականությանը բնորոշ հարց ու պատասխանի ձևով շարադրված դասագրքերում[1]: Դրանցից մի քանիսը՝ տարբեր հեղինակների կողմից ստեղծված՝ պահպանվել են: Հաճախ այդ աշխատությունները կրել են հանրագիտարանային բնույթ՝ իրենց մեջ ներառելով հայ իրականության մեջ և առհասարակ Միջնադարում ձևավորված պատկերացումներն ու իմացությունը փիլիսոփայության, աստվածաբանության, ծիսագիտության, պատմության, քերականագիտության, աստղաբաշխության, երաժշտագիտության, տոմարագիտության, աշխարհագրության և այլնի մասին:

Մեզ հասած առաջին նմանատիպ համառոտ հանրագիտարան-հարցարանը Հովհաննես Վանականի կազմած «Հարցմունք եւ պատասխանիք»-ն է, որը Վանական վարդապետի պահպանված գործերից ամենաարժեքավորն է համարվում: Այն լայնորեն գործածվել է Հայաստանի միջնադարյան համալսարաններում և առաջին հերթին իր իսկ հիմնադրած Խորանաշատի հռչակավոր վարդապետարանում: «Հարցմունք եւ պատասխանիք»-ը շարադրված է մատչելի, միջին հայերենին մոտեցող լեզվով:

Ի թիվս այլ գիտությունների, Հովհաննես Վանականի դասագրքում տեղ են գտել երաժշտական արվեստին վերաբերող հարցեր և պատասխաններ, ինչը վկայում է այն մասին, որ Խորանաշատի դպրոցի կրթական ծրագրում հոգևոր երգարվեստի գործնական ուսուցմանը, եկեղեցական երաժշտության պատմության, տեսության և գեղագիտության հարցերին լուրջ ուշադրություն էր հատկացվում: Պետք է նշել, որ Վանական վարդապետի հարցարան-դասագրքի այս մասը մինչ այժմ չի արժանացել առանձին քննության, այնինչ երաժշտությանը վերաբերող պարբերությունները հատկանշվում են մի շարք ուշագրավ դիտարկումներով և մեկնաբանություններով[2]:

Բնագիրը կրում է «Հարցմունք եւ պատասխանիք արարեալ Վանական վարդապետէ» վերնագիրը: Ամեն ինչից երևում է, որ Հովհաննես Վանականը բանիմաց էր հոգևոր երաժշտության ոլորտում: Առաջին հերթին նա դրսևորել է իրեն որպես հմուտ շարականագետ-աստվածաբան: Հայտնի է, որ ի թիվս այլ գործերի, Վանական Վարդապետը հեղինակել է Անանիա Շիրակացու Վարդավառի առաջին օրվա կանոնի «Ուրախացիր, պսակ կուսից» ճաշու շարականի

[1] Հունալեզու մատենագրության մեջ նմանատիպ երկերը կոչվում էին ’ερωταποκρίσεις.

[2] Բացառություն են կազմում մեր մենագրություններում և հոդվածներում տեղ գտած Հովհաննես Վանականի հարցարանում արծարծված ձայնեղանակների մեկնության և գործնական կիրառությանը նվիրված հատվածների վերլուծությունները [3, էջ 58-63; 4, էջ 88-94; 21, էջ 208-210; 22, էջ 91-95]:

մեկնությունը: Իր հարցարանի մի շարք էջերում նա մեկնում է այլևայլ շարականների բովանդակության խրթին հատվածների աստվածաբանական խորհուրդը՝ հստակեցնելով վարդապետարանի սաների համար դժվարըմբռնելի տեղերի իմաստը [14, 61ա, 79բ, 104ա, 111ա և այլն]:

Նշենք նաև, որ Հովհաննես Վանականի սույն երկում է զետեղված շարականագիրների հնագույն պահպանված համառոտ ցուցակը, որն, ըստ երևույթին, հիմք է հանդիսացել հետագայի մյուս ցուցակագիրների համար: Մեջբերենք այն ամբողջությամբ, նկատի առնելով մի շարք հետաքրքրական մանրամասներ.

«Յաղագս շարականին թէ ո՞վ է արարեալ: Որ զծորան հոգւոյն արբին յիմանալի աղբիւրէն երգեցին ի ժամանակս ժամանակս: ԶԾննդեաննն՝ Մովսէս Քերթողն: ԶՓոխմանն, զՎարդավառին, զՄարգարէիցն, ու զՎարդապետացն, զՄեղաք ամենայնի մինչ յԱռաքելոց՝ Յոհան Մանդակունւոյ: ԶԱպաշխարութիւն՝ Մեսրոպ Վարդապետն: ԶՅայտնութեան Հարցնակարգն զբովանդակն՝ Անանիա Շիրակացին: ԶՅարութեան Աւրհնութեանն Է. ձայնն՝ Ստեփաննոս Սիւնեցին, և զՎառն՝ Ներսէս կաթողիկոս: Զհանգստեանն, զՄարտիրոսացն՝ Պետրոս Կամրջաձորեցին: ԶԽաչին եւ զԵկեղեցւոյն՝ տէր Սահակ Կաթողիկոսն: ԶԱռաւօտու Երգն եւ ձայնից բաժանումն՝ [Սահակ] Պարթեւն» [14, 76բ; 13, էջ 485; 12, 629]:

Ցուցակում արծարծված շարականագիրների ցանկն ընդգրկում է ազգային շարականերգության ձևավորման կարևորագույն շրջաններից V դարը՝ հայ հոգևոր ինքնուրույն երգի հիմնադիրների և նրանց վերագրվող շարականների հիշատակությամբ: Օրինակ, Մեսրոպ վարդապետը, այսինքն՝ Մեսրոպ Մաշտոցը՝ որպես Ապաշխարության շարականների հեղինակ կամ Սահակ Պարթև կաթողիկոսը՝ որպես հայոց եկեղեցական ձայնեղանակների առաջին կարգավորողը, ինչպես և հաղորդում է «Հայսմաւուրքը» [10, էջ 74]: Այնուհետև դա տերունական տոներից Սուրբ Ծննդյանը նվիրված շարականների հեղինակ Մովսես Քերթողն է, այսինքն՝ Մովսես Խորենացին և մի շարք կանոններում զետեղված երգասացությունների հեղինակ Հովհան Մանդակունի կաթողիկոսը: Շարականագիրների դիտարկվող ցուցակում հաջորդիվ տեղ են գտել հայ հոգևոր երգաստեղծության մյուս կարևոր փուլի՝ VII-VIII դարերի երեք նշանավոր հեղինակների՝ Սահակ Ձորափորեցի կաթողիկոսի, Անանիա Շիրակացու և Ստեփանոս Սյունեցու անունների հիշատակությունը: Առաջինի դեպքում նշվում են Խաչի և Եկեղեցու տոներին նվիրված շարականները. «ԶԽաչին եւ զԵկեղեցւոյն՝ տէր Սահակ Կաթողիկոսն»: Անանիա Շիրակացու վերաբերյալ ասված է, որ նա է հեղինակել «զՅայտնութեան Հարցնակարգն զբովանդակն», ինչը, հավանաբար, պետք է ուղղվի «զՅարութեան Հարցնակարգն զբովանդակն», ինչպես հաղորդում են հետագայի մյուս բոլոր շարականագիրների ցուցակները [6, էջ 132-133; 7, էջ 48]: Ստեփանոս Սյունեցու մասին բնագիրն հաղորդում է, որ նա է հեղինակել յոթ ձայնեղանակներում ծավալվող Ս. Հարության Ավագ օրհնությունները, իսկ Վառ ձայնի, այսինքն՝ Գկ ձայնեղանակի օրհնությունները հեղինակել է Ս. Ներսես Շնորհալի կաթողիկոսը: Տվյալներ, որոնք

կրկնում են հետագայի շարականագիրների ցուցակների բոլոր հեղինակները (Սարգիս երեց, Գրիգոր Տաթևացի, Առաքել Սյունեցի և այլք): Այսպիսով, Վանական վարդապետի ցուցակում հիշատակվող ամենաուշ հեղինակներից են Պետրոս Կամրջաձորեցին կամ Պետրոս Գետադարձ կաթողիկոսը՝ որպես հանգստյան և մարտիրոսաց կարգերի մեջ մտնող շարականների հեղինակ և Ներսես Շնորհալին կամ Ներսես Դ Կլայեցի կաթողիկոսը՝ Վառ ձայնին պատկանող ավագ օրհնությունների առնչությամբ: Ուշագրավ է, որ տվյալ ցուցակում XIII դարի որևէ հեղինակ չի հիշատակված, ամենայն հավանականությամբ, դեռ չկանոնացված լինելու պատճառով. մի գործընթաց, որը երբեմն բավական երկար էր տևում: Վերը նշված հանգամանքը նույնպես հաստատում է տվյալ ցուցակի ժամանակագրական առումով առավել հին լինելու փաստը:

Ձեռագրում Շարակնոցի պատմությանն առնչվող նաև այլ շահեկան լրացումներ կան, օրինակ. «Հց. զՄանկունքն ո՞վ է սահմանել: Պատ. Եզր կաթողիկոս: Հց. Առաւօտու կանո՞ն: Պատ. Գիւտ կաթողիկոսի որ եւ զԲարձրացուցէ[ք]ն յուզել ի Դաւթա» [14, 76բ]: Պաշտոներգության բարեկարգմանը Եզր և Գյուտ կաթողիկոսների մասնակցության մասին հաղորդող այս եզակի տեղեկությունները հայտնի են հենց Վանական վարդապետի հարցարանից, չկրկնվելով որևէ այլ աղբյուրներում:

Բնականաբար, Հովհաննես Վանականը չի շրջանցել սաղմոսերգության ոլորտը: Ավելացնենք, որ ի թիվս այլ մեկնողական երկերի, նրա գրչին է պատկանում նաև «Այս ծով Մեծ» սաղմոսի փոքրածավալ մեկնությունը: Անդրադառնալով սաղմոսներին, նա առաջին հերթին շեշտել է սաղմոսների «առաքելադիր», այսինքն՝ առաքյալների կողմից սահմանված լինելու հանգամանքը, այնուհետև բացատրել է դրանց կիրառությունը, մասնավորապես, գուբղաների, փոխերի և ալելուների կատարման ժամանակը.

«Հց. Ո՞վ է կարգեալ սաղմոսն. Պտ. Առաքեալքն ընդ տիւ և ընդ գիշեր բոլորեալ. Հց. Երինզկունն՝ զնեղութիւն. Պտ. Առաքեալքն յաւուրն յելն զի ելք աշտիճանաց ասի. Հց. կանոնն. պտ. անուն որ է սահման որպէս թուղթն Պաւղոսի և գոբողայն որպէս ընթերցուած. և փոխն որպէս գլուխ. հանգիստն որպէս մասնաւոր. և տունքն որ է կիսատուն՝ ներքնաբաժին. մասնաւոր: Իսկ փառքն և ալելու և աւրհնութիւն և փառք, ամէն և ընդ հոգւոյդ քում, այս ամէն առաքելադիր է» [14, 46բ]:

Եկեղեցական ձայնեղանակների հարցում Վանական Վարդապետը առաջնային է համարել դրանց ծիսական-գործնական կիրառության խնդիրը, ուստի «Հարցմունք եւ պատասխանիք»-ում համապատասխան հատվածը նվիրված է Ավետարանի, առաքելոց թղթերի և մարգարեությունների երգեցիկ ընթերցանության համար սահմանված ձայնեղանակներին վերաբերող որոշակի ցուցումներին, այսպես. «Հց. Զգրեանքդ ի ձայնէ որպէ՞ս կարդան: Պատ. զԱւետարանն՝ յառաջի ձայն. Զառաքեալն՝ յերկրորդ է. զԵսային՝ յերրորդէ. Զներբողեանն՝ ի վերջին ձայնէ: Ստեղն՝ Յոհան կայ որ յերկրորդէ. եւ այլն՝ յառաջին ձայնէ: Յայերէն ներբողեան՝ ի ստեղն» [14, 57բ]:

Հիմնականում պարբերության իմաստը հստակ է, թեև ստեղի ձայնեղանակներին վերաբերող հատվածը կարող էր ավելի որոշակի լինել: Հավանաբար, խոսքը վանական երգչական գործնականում շատ ընդհանրացված և հանրածանոթ իրողությունների մասին է, այդ պատճառով հեղինակը հարկ չի համարել դրանք մասնավորելու: Պարզ չէ միայն, թե ի՞նչ երգասացություններ նկատի ունի Վանական Վարդապետը «ներբողեան» և «հայերէն ներբողեան» ասելով, որոնցից «ներբողեան»-ը պետք է երգվեր վերջին, այսինքն՝ չորրորդ ձայնեղանակում, իսկ «հայերէն ներբողեան»-ը՝ ստեղի ձայնեղանակում: Այս հարցը թերևս կարոտ է լրացուցիչ հետազոտման, ուստի գերադասում ենք առայժմ ձեռնպահ մնալ ենթադրություններից:

Ուշագրավ է, որ «Հարցմունք եւ պատասխանիք»-ում առկա է մի փոքր պարբերություն՝ նվիրված ժողովրդական նվագարաններ քանոնի և փանդիռի նկարագրությանը, ընդ որում Հովհաննես Վանականը նշում է քանոնի երեք անվանում. «Հց. Առ ո՞րս խեցգետի է յասել: Պտ. երգարան է բոլոր և չորեք կուսի լար արկան: Կեսք կանոն ասեն եւ կեսք՝ խանոն» (գրիչն էլ իր կողմից լուսանցքում ավելացրել է չորրորդ անվանումը՝ «արղանոն»): Իսկ փանդիռի անվան տակ, որը երաժշտական միջնադարագիտության մեջ սովորաբար ներկայացվում է որպես ուդի տարատեսակ, պարկապզուկ է նկարագրված, այսպես. «Պարկ է ուլենի եւ փող է դրած ի ներս: Յանթն դնեն ցից ի վեր եւ ձայն տան ածել ձեռաւքն» [14, 94ա]:

Նախ անհասկանալի է, թե ինչու՞ քանոնը «խեցգետի» է անվանված: Այնուհետև, սխալմո՞ւնք է, թե՞, իրոք, Վանական Վարդապետի ժամանակներում փանդիռ անվան տակ այլ երաժշտական գործիք են հասկացել: Դժվար է ասել, որովհետև դեռ Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ առկա վիպասանների ելույթները նկարագրող հայտնի դրվագում (խոսքը «ի նուագս փանդռան եւ երգս ցցոց եւ պարուց» արտահայտության մասին է) [15, էջ 27] փանդիռն ընկալվում է որպես ուդի ընտանիքին պատկանող լարային գործիք: Բոլոր դեպքերում՝ նման փաստերը ևս մեկ անգամ հավաստում են, որ հասարակական մթնոլորտը և մշակույթն ամբողջությամբ այդ ժամանակաշրջանում ենթարկվել են նոր հովերի ազդեցությանը: Ժողովրդական կենցաղի և արվեստի արձագանքները թափանցում էին վանքերի պարիսպներից ներս՝ իրենց արտահայտությունը ստանալով անգամ վանական միջավայրում ստեղծվող ուսուցողական գրականության էջերում:

Տվյալ դարաշրջանի հեղինակների լայն մտահորիզոնի և շրջահայացության մասին խոսում է այն փաստը, որ ի թիվս տարբեր ավանդապատումների, նրանց գրավել են նաև երաժշտությանը վերաբերող հնագույն հավատալիքներ և առասպելներ պարունակող ավանդությունները: Այսպես, օրինակ, ձայնեղանակների գյուտի հետ կապված հարցմանը պատասխանելիս Հովհաննես Վանականը, ըստ երևույթին, տուրք տալով ազգային մատենագրության մեջ գոյություն ունեցող ավանդույթին, առաջ է բերում «Ձայնից գիւտ ըստ փիլիսոփայից» խորագրով պահպանված հնագույն պատառիկը, որի մեջ առկա են ինչպես հի-

նավուրց բնապաշտական պատկերացումները, այնպես էլ՝ անտիկ շրջանից եկող առասպելների արձագանքները.

«Հց. Որպէ՞ս [է] ձայնից գիւտ. Պտ. Ըստ փիլիսոփայիցն՝ ա. [առաջին ձայն] ի հիւսնականէ. բ. [երկրորդ ձայն] ի դարբնականէ. գ. [երրորդ ձայն] ի գետոց. դ. [չորրորդ ձայն]. յաղաւրեաց է. ե. [հինգերորդ ձայն]. յերկաթոյ. զ. [վեցերորդ ձայն]. ի ծովու ծփմանց. է. [յոթերորդ ձայն]. ի ծովու կենդանեաց. ը [ութերորդ ձայն]. ի յանասնոց. թ. [իններորդ ձայն]. ի գազանէ. ժ. [տասներորդ ձայն] ի հաւուց» [14, 71ա]: Հայ միջնադարյան «ձայնից» մեկնությունների շարքում տվյալ հնագույն մեկնությունը ուշագրավ է նրանով, որ բնագրում արծարծված ձայնեղանակները դեռևս ենթարկված չեն Ութձայնի դասակարգմանը՝ չորս բուն, չորս կողմ և երկու ստեղի ձայնեղանակ, ինչն, անկասկած, վկայում է պատառիկի արխաիկ, նախաքրիստոնեական շրջանից սերելու մասին [4, էջ 43-46]:

Այս պարբերությանը հետևում է «Մաշտոց» ծիսարանին կցվող «Կարգաբերութիւն ցուցմանց աւրհնութիւնաբեր ցուցակի» հիշատակարան-վավերագիրը, որտեղ արձանագրված է հայկական եկեղեցու հիմնական ծեսերի կազմավորման և հայացման գործընթացը. «Երանելոյն Մովսէսի Խորենացւոյ, թարգմանչի, որ էր գրիչ սրբոյն Սահակայ, որդոյն Ներսէսի սրբոյ...» [14, 71ա-72բ]: Տվյալ բնագիրը հաճախ է ընդգրկվել Ժողովածու կոչված մատյաններում, որոնք բովանդակել են աստվածաբանական և գիտական զանազան բնույթի նյութեր [5, էջ 19-21]: Այն ավարտվում է, ինչպես և այլ գրչագրերում, հետևյալ վերջաբանով. «ՃԺԱ ամի անցելոյ[3], յորժամ այս ամենն նորոգեալ հաստատեցան հրամանաւ սրբոյն Սահակայ, ձեռամբ իմով Մովսէսի գրչի, Սահակայ Պարթևի» [14, 71բ]:

Վանական Վարդապետը անդրադարձել է նաև որոշ շարականագիրների, օրինակ, Ստեփանոս Սյունեցու, Համամ Արևելցու, Գրիգոր Մագիստրոս Պահլավունու կենսագրական ուշագրավ տվյալներին: Այսպես, նա առանձին մի ծավալուն պարբերություն ունի՝ նվիրված VII-VIII դդ. նշանավոր փիլիսոփա, քերական և շարականագիր Ստեփաննոս Սյունեցուն (†735 թ.), որտեղ Սյունեցի եպիսկոպոսի վարքից հայտնի նրա կյանքի դրվագները ներկայացված են ժողովրդական ավանդապատման ոճով, այսպես.

«Հց. [Ո՞վ է] Ստեփաննոս Սյունեցին: Պատ. Երեց էր ի դիւան Աշոտ անուն իշխան[4] երկաբնակ: Խոսեցաւ ընդ նմա և հեգնեաց թե տգետ ես: Եւ նա գնաց ի Բիւզանդիոն առ միակեաց մի գիր և լեզու ուսաւ. Այս իշխանս աստ ի չար Աստուծոյ խոսեաց. թագաւոր կոչեաց միակեցն. խրատէր ետ, թե հարցանեն թե յի՞նչ ես եկել. կամ ի՞նչ մարդ ես: Ասա[ւ] թե աղքատ եմ և մուրուաջ ագաւ եկի: Ծանոթացաւ և գիր էառ ի թագաւորէն ի Հռոմ գնաց և գիրք կարդաց:

[3] Խոսքը քրիստոնեությունը որպես պետական կրոն ընդունման՝ 301 թվականից 111 տարի անց (այսինքն՝ 412 թ.) կատարվող իրադարձությունների մասին է: Բնագրում պատմվում է, որ մինչ այդ տարեթիվը հայոց եկեղեցու ծիսակարգը հետևում էր հին՝ Գրիգոր Լուսավորչի կողմից սահմանված կարգին:

[4] Սմբատն այստեղ դարձել է Աշոտ, սակայն պարզ է, որ խոսքը Դվինի Սմբատ Բագրատունի իշխանի մասին է:

զԴիոնէսիոսն և զԿազմութիւն և զբնութիւն [մարդոյ] գիրքն թարգմանեաց: Եւ ի գալն թուղթ տվին յազգս: Ոչ ով պատասխանելոյ փոյտ չարար. ինքն պատասխանի գրեաց: Բայց մինչ ի յայն տեղն թե սերմացողքն այսոցիկ ի հանդերձեալն ունին զպտուղն. զայն որ նախատինքն է այլք են գրել ժամանակին» [14, 71բ; 110ա][5]: Խոսքն այստեղ Կոստանդնուպոլսի պատրիարք Գերմանոս Ա.-ի հայտնի նամակի մասին է, որը Ստեփաննոս Սյունեցու միջոցով պատրիարքն ուղարկեց Հայաստան: Դավանաբանական բովանդակության այդ նամակի պատասխանը գրեց հենց ինքը՝ Ստեփաննոս Սյունեցին, Հայաստան վերադառնալով [9, էջ 348-364]: Երկու նամակներն էլ պահպանվել են:

Խաչենի թագավոր, հետագայում հոգևորականի կոչում ընդունած և իրեն ամբողջությամբ մատենագրությանը նվիրած Համամ Արևելցու (†898 թ.) մասին Հովհաննես վարդապետը հայտնում է հետևյալը.

«Հց. Ո՞վ է Համամն առակաց մեկնիչն. Պտ. Բագրատունեաց իմաստասէր աբեղա Յոհան է անուն: Հց. Զի՞նչ է արարել: Պտ. Զվերջին զգոբեղայքդ նա է կարգել ի սաղմոսին վերայ. և զքերականն մեկնեալ» [14, 94բ]:

Այստեղ ուշադրություն է գրավում Վանական Վարդապետի հաղորդածն այն մասին, որ Համամ Արևելցին Սողոմոնի առակների և քերականի մեկնությունները հեղինակելուց բացի, զբաղվել է նաև սաղմոսերգության կարգավորումով, մասնավորապես, ըստ Վանականի՝ նրան է պատկանում վերջին գուբղաների հավելումը սաղմոսներին: Դա համաձայնեցվում է մի շարք այլ մատենագրական աղբյուրների հետ (Ստեփաննոս Ասողիկ Տարոնեցի, Մխիթար Այրիվանեցի և ուրիշներ)՝ հավաստելով Համամ Արևելցու՝ հոգևոր երգարվեստի հետ սերտ առնչության մասին: Համամի անունով պահպանված «Աստված երկնաւոր» սկզբնատողով ապաշխարական անվավեր շարականը, որը գաղափարված է ըստ անվանական ծայրակապի [19, էջ 163-164], ենթադրել է տալիս, որ նա կարող էր այլ երաժշտաբանաստեղծական գործեր ևս հեղինակել [2; 23, էջ 297-330]:

Գրիգոր Մագիստրոսի մասին Հովհաննես Վանականը հայտնում է.

«Մագիստրոսն Գրիգոր Դարուն եկեղեցի է շինել և ծախիւք պատկեր բերել և անդ եդեալ. և զկենդանագիր անարատ ծնողի քո առաջի: Եւ Թումա պատմագիրն յիշել է զեկեղեցին. Տէր Վահրամ կաթողիկոս որդի է նմա» [14, 111բ]:

Այստեղ տեղի է ունեցել որոշակի խառնաշփոթ. ինչպես և այլ միջնադարյան աղբյուրներում՝ իրար են շփոթվել հայոց պատմությունից հայտնի երկու նշանավոր իշխանական տոհմերի ներկայացուցիչներ՝ VII դարում ապրած Աշոտ Պատրիկ Բագրատունին և X-XI դարերում ապրած ականավոր պետական գործիչ, գիտնական, բանաստեղծ և շարականագիր Գրիգոր Մագիստրոս Պահլավունին: Հետաքրքրական է, որ պատմական ավանդույթը այս երկու անձերի հետ է կապել Խաչի վերացման տոնի հինգերորդ օրվա «Զորս ըստ պատկերի Քում» շարականի ստեղծումը: Մի շարք հայագետներ՝ Կ. Կոստանյանցը [11, էջ

[5] Բնագրի հատվածները մեջբերված են տվյալ ձեռագրի ուղղագրությունը և կետադրությունը պահպանելով:

289-343], Գ. Հովսեփյանցը [16, էջ 3-6] և ուրիշներ հանդես են եկել իրենց վարկածներով այս կծիկը քանդելու համար: Տողերիս հեղինակը նույնպես անդրադարձել է այդ խնդրին: Ուսումնասիրությունը ցույց տվեց, որ տվյալ պատմության մեջ միախառնվել են երկու իրադարձություն. ա) ըստ տարբեր մատենագրական աղբյուրների՝ պատկերամարտության շրջանում Աշոտ Պատրիկը Բյուզանդիայից Ամենափրկիչ հրաշագործ սրբապատկերը բերեց Հայաստան (փաստորեն՝ փրկելով ոչնչացումից) և այդ սրբապատկերի պատվին եկեղեցի կառուցեց Դարույնքում, ինչի մասին, իրոք, հաղորդել է Թովմա Արծրունին [18, էջ 133] և, բ) XI դ. Հավուց թառ վանական համալիրի մայր եկեղեցու վերանորոգության և նավակատիքի առիթով շինարարական աշխատանքի հովանավոր Գրիգոր Մագիստրոսն այդ սրբապատկերը նվիրաբերել է եկեղեցուն: Սրբապատկերն այդ ժամանակ արդեն պատկանում էր Պահլավունիներին՝ դառնալով ընտանեկան սրբություն, որը Մագիստրոսն ընծայել է Հավուց Թառին: Հենց այդ առիթով էլ ստեղծվել է «Զորս ըստ պատկերի Քում» շարականը [8, էջ 106-115; 1, էջ 42-53; 20, էջ 44-54], որի տողերից երկուսը տեղ են գտել նաև Հավուց Թառի հայտնի արձանագրության մեջ [16, էջ 3]: Շարականի աղավաղված մի տող մեջբերել է նաև Հովհաննես Վանականը՝ «և զկենդանագիր անարատ ծնողի քո արկանեմ առաջի (...)»: Պարբերության եզրափակիչ տողը՝ «տէր Վահրամ կաթողիկոս որդի է նմա» հուշում է, որ խոսքը միանշանակ Գրիգոր Մագիստրոսի որդու՝ կաթողիկոս Գրիգոր Բ Վկայասերի մասին է, ում ավազանի անունը Վահրամ էր: Գրիգոր Մագիստրոսին նվիրված պարբերությամբ է ավարտվում դիտարկվող ձեռագրում Հովհաննես Վանականի «Հարցմունք եւ պատասխանիք» երկը, որը գուցե հասել է մեզ ոչ ամբողջական տեսքով:

Եվ, վերջապես, Վանական վարդապետի աշխատության մեջ առկա է ընդհանրապես երաժշտական արվեստին վերաբերող մի ուշագրավ հարցում. «Հց. յարվեստէ՞ն. պտ. թե լավ առնէ արվեստ՝ գովի և թե վատթար՝ պարսաւի» [14, 99բ]: Մեր կարծիքով, այս կարճառոտ գրառման մեջ խոսքը երաժշտական կատարողական արվեստի մասին է, որը պետք է գնահատվի ըստ առկա վարպետության աստիճանի: Ուշագրավ մի ասույթ, որը վերաբերում է բոլոր ժամանակներում ինչպես հոգևոր երգարվեստով, այնպես էլ՝ աշխարհիկ երաժշտությամբ զբաղվողներին:

Եզրակացություն

Հովհաննես Վանականի «Հարցմունք եւ պատասխանիք» երկը XIII դարի հայ միջնադարյան բարձրագույն տիպի դպրոցներում շրջանառվող հանրագիտարանային բնույթի կարևոր ձեռնարկներից էր: Այդ աշխատության օրինակով են ստեղծվել հետագայի նմանատիպ երկերը, որոնց թվում՝ Վարդան Արևելցու «Ժղլանքը» և Գրիգոր Տաթևացու «Գիրք հարցմանց»-ը, որոնք աչքի են ընկնում ավելի մեծ ծավալով և հարցադրումների ավելի լայն շրջանակով: Սակայն Վանական վարդապետի ձեռնարկի հոգևոր երգարվեստի տեսությանն ու գեղագիտության հարցերին նվիրված հատվածները ներառվել են նրանց կողմից գրեթե

անփոփոխ, հաստատելով մի կողմից՝ այդ դրոյթների հավաստիությունը, մյուս կողմից՝ Վանական վարդապետի հեղինակությունը հոգևոր երգարվեստի բնագավառում: Ակնհայտ է, որ և՛ Վարդան Արևելցին, և՛ Գրիգոր Տաթևացին իրենց դասագրքերը կազմելիս, որպես նմուշօրինակ, տեսադաշտում են ունեցել Հովհաննես Վանականի վերը դիտարկված երկը՝ լայնորեն օգտվելով և ոգեշնչվելով նրանից:

Գրականություն

1. Արևշատյան Ա. Գրիգոր Մագիստրոսը՝ շարականագիր և գեղագետ. Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2014:

2. Արևշատյան Ա. Համամ Արևելցուն վերագրվող «Համառօտ յերաժշտական արուեստէ ի յարապ գրոց» երկը. Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2021:

3. Արևշատյան Ա. Հայ միջնադարյան «ձայնից» մեկնություններ. Երևան, «Կոմիտաս», 2003:

4. Արևշատյան Ա. Ձայնեղանակների ուսմունքը միջնադարյան Հայաստանում. Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2013:

5. Արևշատյան Ա. «Մաշտոց» ժողովածուն որպես հայ միջնադարյան երաժշտական մշակույթի հուշարձան. Երևան, ՀԳԱ հրատ., 1991:

6. Արևշատյան Ա. «Յաղագս գիտութեան ձայնից» մեկնության հեղինակի հարցի շուրջ. Անանիա Նարեկացի՞, թե՞ Անանիա Շիրակացի, «Պատմաբանասիրական հանդես», 2014, № 1, էջ 131-136:

7. Արևշատյան Ա. Ներսես Տայեցի կաթողիկոսը և հայ հոգևոր երգարվեստը. Պատմական Տայք. Պատմություն. Դավանանք, Մշակույթ. Հոդվածների ժողովածու. Մայր Աթոռ Ս. Էջմիածին, 2019, էջ 43-50:

8. Արևշատյան Ա. Ո՞վ է «Զորս ըստ պատկերի Քում» շարականի հեղինակը. «Էջմիածին», 1997, Դ-Ե, էջ 106-115:

9. Արևշատյան Ա. Ստեփաննոս Սյունեցու վարքը որպես վաղքրիստոնեական Հայաստանի երաժշտական արվեստի արժեքավոր պատմական աղբյուր, «Բանբեր Մատենադարանի», 30. Երևան, 2020, էջ 348-364:

10. Գիրք որ կոչի Այսմաւուրք. Կոստանդնուպոլիս, 1730:

11. Կոստանեանց Կ. Հին հիշատակք, «Արարատ», 1897, օգոստոս, էջ 289-343:

12. Մայր Ցուցակ ձեռագրաց Սրբոց Յակոբեանց վանքի, կազմեց Նորայր եպս. Պողարեան, հ. Բ. Երուսաղէմ, 1967:

13. Մայր Ցուցակ հայերէն ձեռագրաց Սրբոց Յակոբեանց վանքի, կազմեց Նորայր եպս. Պողարեան, հ. Դ. Երուսաղէմ, 1969:

14. Մաշտոցի անվան Մատենադարան, ձեռ. 5611, Ժողովածու, ԺԳ դ., Գրիչ Թումայ քիյ, անանուն:

15. Մովսէսի Խորենացւոյ Պատմութիւն Հայոց. Տփղիս, 1913:

16. Յովսէփեանց Գ. Հաւուց Թառի Ամենափրկիչը և նմանատիպ հուշարձաններ հայ արվեստի մեջ. Երուսաղէմ, 1937:

17. Ոսկեան Հ. Յովհաննէս վանական եւ իւր դպրոցը. Վիեննա, 1922:

18. Պատմութիւն տանն Արծրունեաց ի Թովմա վարդապետէ Արծրունւոյ. Կ. Պոլիս, 1852:

19. Ս. վրդ. Ամատունի, Հին և նոր պարականոն կամ անվավեր շարականներ. Վաղարշապատ, 1911:

20. Аревшатян А. Григор Магистрос – гимнограф и эстетик. Ереван, Изд-во «Гитутюн» НАН РА, 2018.

21. Аревшатян А. Теории средневековых гласов, «Музыкальная Академия». Москва, 2005, № 1, с. 208-210.

22. Аревшатян А. Учение о гласах в средневековой Армении. Ереван, Изд-во «Гитутюн» НАН РА, 2020.

23. Arevchatian A.S. Le traité *Brefs extraits des livres arabs sur l'art musical*, attribué à Hamam Arewelc'i. Revue des Etudes Armeniennes, 40. Paris, 2021, p. 297-330.

References

1. Arevshatyan A. Grigor Magistros as Hymngrapher and Aesthetician. Yerevan, *Gitutyun* (Science) Publishing House of the NAS RA, 2014 (in Armenian).

2. Arevshatyan A. The Treatise "Brief Extracts from Arabic Books on Musical Art" attributed to Hamam Areveltsi. Yerevan, *Gitutyun* (Science) Publishing House of the NAS RA, 2021 (in Armenian).

3. Arevshatyan A. Armenian Medieval Commentaries on the Musical Modes. Yerevan, Komitas, 2003 (in Armenian).

4. Arevshatyan A. The Theory of Musical Modes in Medieval Armenia. Yerevan, *Gitutyun* (Science) Publishing House of the NAS RA, 2013 (in Armenian).

5. Arevshatyan A. The Ritual "Mashtotz" as a Document of Armenian Medieval Musical Culture. Yerevan, Publishing House of the AS RA, 1991 (in Armenian).

6. Arevshatyan A. About the Question of the Commentary "On the Science of Musical Modes"; Anania Narekatsi or Anania Shirakatsi? Patmabanasirakan Handes (Historical and Philological Journal), 2014, № 1, p. 132-133 (in Armenian).

7. Arevshatyan A. Nerses Tayetsil and the Art of Armenian Sacred Chant. Collection of articles. The Holy See of Eǰmiacin, 2019, p. 43-50 (in Armenian).

8. Arevshatyan A. Who is the Author of Hymn "According to Your Picture". "Eǰmiajin", 1997, IV-V, p. 106-115 (in Armenian).

9. Arevshatyan A. The Life of Stepanos Syunetsii as a Source of the History of Musical Life of the Early Christian Armenia, Banber Matenadarani (The Herald of Matenadaran), v. 30, 2020, p. 348-364 (in Armenian).

10. A Book Called Synaxary. Constantinopolis, 1730 (in Armenian).

11. Kostaneants K. The Old Memories, "Ararat", 1897, p. 289-343 (in Armenian).

12. The General Catalogue of the Armenian Manuscripts of the Convent of Saints Jacobs, by Bishop Norayr Połarean, v. II. Jerusalem, 1967.

13. The General Catalogue of the Armenian Manuscripts of the Convent of Saints Jacobs, by Bishop Norayr Połarean, v. IV. Jerusalem, 1969.

14. Matenadaran after Mashtots (MM), mns. 5611, XIII c.

15. The History of Armenia by Movses Khorenatsi. Tiflis, 1913 (in Armenian).

16. Hovsepeants G. The All Saviour Icon from Havuts Taṙ and Similar Monuments in the Armenian Art. Jerusalem, 1937 (in Armenian).

17. Oskean H. Hovannes Vanakan and his School. Vienna, 1922 (in Armenian).

18. The History of the Artsrunis. Constantinople, 1852 (in Armenian).

19. Amatuni S. The Old and New Non-Canonical or Apocryphal Sharakans. Vałarshapat, 1911 (in Armenian).

20. Arevshatyan A. Grigor Magistros as Hymngrapher and Aesthetician. Yerevan, *Gitutyun* (Science) Publishing House of the NAS RA, 2018 (in Russian).

21. Arevshatyan A. The Theories of Musical Modes. Musical Academy. Moscow, 2005, № 1, p. 208-210 (in Russian).

22. Arevshatyan A. The Theory of Echoi (Church Modes) in Medieval Armenia. Yerevan, *Gitutyun* (Science) Publishing House of the NAS RA, 2020 (in Russian).

23. Arevchatian A.S. Le traité *Brefs extraits des livres arabs sur l'art musical*, attribué à Hamam Arewelc'i. Revue des Etudes Armeniennes, 40. Paris, 2021, p. 297-330.

ПРОБЛЕМЫ ДУХОВНОЙ МУЗЫКИ В СОЧИНЕНИИ ВАНАКАНА ВАРДАПЕТА «ВОПРОСЫ И ОТВЕТЫ»

АННА АРЕВШАТЯН*

Для цитирования Аревшатян, Анна. "Проблемы духовной музыки в сочинении Ванакана вардапета «Вопросы и ответы»". *Искусствоведческий журнал,* N 2 (2022): 28-39. DOI: 10.54503/2579-2830-2022.2(8)-28

Разнообразный материал, преподаваемый в семинариях, действующих при монастырях средневековой Армении, был обобщен в учебниках, написанных в форме вопросов и ответов, типичных для средневековой дидактической литературы. Первым дошедшим до нас таким сочинением является учебник «Вопросы и ответы», составленный Ованесом Тавушеци, более известным как Ванакан Вардапет (1181-1251). Данное сочинение широко использовалось в средневековых университетах Армении и прежде всего в основанной им знаменитой Хоранашатской семинарии. Помимо сведений о других науках, учебник Ованеса Ванакана содержит вопросы и ответы, связанные с музыкальным искусством, что свидетельствует о том, что в учебной программе школы Хоранашата практическому изучению духовного пения, истории, теории и эстетике церковной музыки уделялось серьезное внимание. Книга Ованеса Ванакана «Вопросы и ответы» – одно из важных сочинений энциклопедического характера, циркулировавших в армянских средневековых семинариях-университетах XIII века. По образцу этого произведения были созданы последующие подобные произведения, в том числе «Беседы» Вардана Аревелци и «Книга вопрошений» Григора Татеваци.

Ключевые слова: Хоранашат, семинария, Ванакан Вардапет, «Вопросы и ответы», гимнология, теория Восьмигласия, комментарии на гласы.

* Ведущий научный сотрудник отдела музыки Института искусств НАН РА, заслуженный деятель искусств Армении, доктор искусствоведения, профессор, anna_arevshatyan@hotmail.com, статья представлена 29.08.2022, рецензирована 01.12.2022, принята к публикации 15.12.2022.

PROBLEMS OF SPIRITUAL MUSIC IN THE WORK *QUESTIONS AND ANSWERS* BY VANAKAN VARDAPET

ANNA AREVSHATYAN*

For citation: Arevshatyan, Anna. "Problems of Spiritual Music in the Work *Questions and Answers* by Vanakan Vardapet", *Journal of Art Studies,* N 2 (2022): 28-39. DOI: 10.54503/2579-2830-2022.2(8)-28

Diverse material, taught in the seminaries at the monasteries of medieval Armenia, was summarized in textbooks written as questions and answers, typical of medieval didactic literature. The first such work that has come down to us is the textbook *Questions and Answers*, compiled by Hovhannes Tavushetsi, better known as Vanakan Vardapet (1181-1251). This work was widely used in the medieval universities of Armenia and, above all, in the famous Khoranashat seminary founded by him. In addition to information about other sciences, Hovhannes Vanakan's textbook contains questions and answers related to the art of music, which indicates that in the curriculum of the Khoranashat School, serious attention was paid to the practical study of spiritual singing, history, theory, and aesthetics of church music. The book *Questions and Answers* by Hovhannes Vanakan is one of the important works of encyclopedic nature that circulated in the Armenian medieval seminaries-universities of the 13th century. Following the model of this work, subsequent similar works were created, including *Conversations* by Vardan Areveltsi and *The Book of Questions* by Grigor Tatevatsi.

Key words: Khoranashat, seminary, Vanakan Vardapet, *Questions and Answers,* hymnology, theory of Octoechos, Commentaries on musical modes.

* Leading Researcher at the Music Department of NAS RA Institute of Arts, Honored Art Worker of the RA, Member of the Board of the Composers Union of Armenia, Doctor of Sciences (Arts), Professor, anna_arevshatyan@hotmail.com. The article was submitted on 29.08.2022, reviewed on 01.12.2022, accepted for publication on 15.12.2022.